evocaBANK

2023 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

Բովանդակություն

Ընդհանուր տեղեկատվություն 03
Բանկի տեսլական 04
Բանկի առաքելություն 05
Հիմնական արժեքներ և սկզբունքներ 06
Բաժնետերեր 08
Ղեկավարություն 09
Մրցանակներ 10
Բանկը՝ որպես հաշվետու թողարկող 13
Արդյունքներ 14
Ֆինանսական արդյունքներ 21
Ռիսկերի կառավարում 25
Վարկային ռիսկի կառավարում 26
Իրացվելիության ռիսկի կառավարում 29
Շուկայական ռիսկ 31
Տոկոսադրույքի ռիսկի կառավարում 32
Արտարժութային ռիսկի կառավարում 33
Գործառնական ռիսկի կառավարում 34
Ռազմավարական ռիսկի կառավարում 36
Ֆինանսական հաշվետվություն 37
Պատասխանատու անձանց հայտարարություն 39

Ընդհանուր տեղեկատվություն

Էվոկաբանկը արագ, պարզ և նորարար ծառայություններ մատուցող բանկ է, որն առանձնանում է տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում մոբայլ ծառայությունների զարգացմանը:

Մենք աշխատում ենք mobile-first ֆորմատով՝ յուրաքանչյուր նոր ծառայություն նախագծելիս՝ նախեւառաջ հաշվի ենք առնելով դրա՝ հավելվածով օգտագործման հարմարավետությունը:

Աշխարհը թվային է դառնում, և մենք պատրաստ ենք դրան:

Բանկի տեսլական

Լինել ամենանորարար և առաջադեմ բանկային ծառայություններ մատուցող ֆինանսական հաստատությունը Հայաստանում, որի բոլոր ծառայություններից հնարավոր կլինի օգտվել առանց բանկ այցելելու:

Բանկի առաքելություն

Նորագույն տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ մատուցել Ֆինանսական ծառայությունները պարզ, արագ և հարմարավետ եղանակով՝ գործելով mobile-first ձևաչափով:

Մենք մշտապես կատարելագործում ենք մեր ծառայությունները՝ դարձնելով մարդկանց կյանքն ավելի հարմարավետ:

Հիմնական արժեքներ և սկզբունքներ

Ազնվություն Մենք ազնիվ ենք գործում բոլոր հարաբերություններում:

Նորարարություն Մենք շարունակաբար ներդնում և կիրառում ենք նորարարություններ՝ առաջարկելով հաճախորդներին նորագույն տեխնոլոգիաների լավագույն լուծումները:

Հուսալիություն Մենք կայուն ենք և հուսալի թե՛ հաճախորդների, և թե՛ գործընկերների համար:

Թափանցիկություն Մենք բաց ենք և թափանցիկ հանրության առջև, միաժամանակ փակ՝ հաճախորդի բանկային և առևտրային գաղտնիքի պահպանման հարցում:

Հաճախորդների վստահություն
Հաճախորդները մեր գործունեության կենտրոնում են.
մենք գնահատում և ամուր ենք պահում հաճախորդների վստահությունը։

Հարմարավետություն Մենք ձգտում ենք բարելավել հաճախորդների կենսակերպը՝ դարձնելով այն առավել հարմարավետ։

Գործարար հեղինակություն Բարի համբավը մեր ամենաթանկ և անփոխարինելի ակտիվն է։

Թիմային ոգի Մենք համախմբել ենք լավագույն թիմը՝ մեր հաճախորդներին լավագույն սպասարկում ապահովելու համար։

Բաժնետերեր և Ղեկավարություն

Բանկի Խորհուրդ

ԽՈՍԵ ՄԱՐԻԱ ՄՈՐԵՆՈ ԴԵ ԲԱՐԲԵԴԱ, LL.M., MBA, PhD
Խորհրդի նախագահ

ՀԱՍԱՆ ՖԱՐԴԱՆ ՀԱՍԱՆ ԻԲՐԱՀԻՄ ԱԼՖԱՐԴԱՆ
Խորհրդի անդամ, Աուդիտ կոմիտեի նախագահ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՔՅԱՆ, LL.M., MPA
Խորհրդի անդամ

ՄԱՐԻՆԱ ՓՍՈՄԱՍ
Խորհրդի անդամ

ՏԱԹԵՒԻԿ ՋԱՆՈՅԱՆ, MBA
Խորհրդի անդամ

Բանկի Բաժնետեր

ՀՀ քաղաքացի, Շվեյցարիայի ռեզիդենտ Մարետա Ռուդիկի Գևորկյանը հանդիսանում է Բանկի ուղղակի նշանակալից մասնակիցը և միանձնյա տիրապետում է Բանկի հասարակ անվանական բաժնետոմսերի 100%-ին:

Ղեկավարություն

Բանկի Վարչություն



ԿԱՐԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
MBA, PhD
Վարչության նախագահ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ, PhD
Վարչության նախագահի առաջին տեղակալ

ՏԱԹԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
MBA, PMP
Վարչության նախագահի տեղակալ

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Վարչության նախագահի տեղակալ



ԼԻԼԻԹ ԳԱԲՈՅԱՆ, MBA
Վարչության նախագահի տեղակալ ֆինանսական գծով

ԷՄՄԱ ՋԱՆԻՆՅԱՆ
MBA, PHD, ACCA
Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ

ՍՄԲԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ

ՄՀԵՐ ՍԱՀԱԿՅԱՆ
Վարչության անդամ, Ծրագրավորման և գործառնական համակարգերի վարչության պետ

Մրցանակներ 2017-2018

2017

Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում

Global Finance

2018

Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում

Global Finance

Մրցանակներ 2019-2020

2019

Որակի գերազանցություն
Raiffeisen Bank International

2019

Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում
Global Finance

2020

Լավագույն մոբայլ բանկը Հայաստանում
SME Banking Club

Մրցանակներ 2021

2021

Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում
Global Finance

2021

Լավագույն թվային բանկը Հայաստանում
Global Banking & Finance Review

2021

Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում
Global Finance

Մրցանակներ 2022

2022

Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում
Global Finance

2022

Լավագույն թվային բանկը Հայաստանում
Global Banking & Finance Review

2022

Լավագույն ՓՄՁ բանկը Հայաստանում
Global Finance

Բանկը՝ որպես հաշվետու թողարկող

Էվոկաբանկը 2023թ մարտի 27-ին թողարկեց պարտատոմսեր, որոնք ամբողջությամբ տեղաբաշխվեցին։

Թողարկման ծավալը՝ 2 մլրդ ՀՀ դրամ և 10 մլն ԱՄՆ դոլար և 7 մլն Եվրո

- Արժեկտրոնային եկամտաբերություն՝ 11%, 5.25% և 4% (ՀՀ դրամի, ԱՄՆ դոլարի և Եվրոյի համար)
- Արժեկտրոնի վճարման պարբերականություն՝ եռամսյակային։
- Շրջանառության ժամկետը՝ 30 և 39 ամիս։

Արդյունքներ Նորություններ

Նոր միջազգային վարկանիշ Էվոկաբանկին Fitch Ratings-ից

Էվոկաբանկը 'Fitch Ratings'-ի կողմից արժանացել է IDR Դրական հեռանկարով 'B' և VR 'b' վարկանիշներին:

տեսնել ավելին



Արդյունքներ Հաճախորդներ, նկարագրություն

ԹՈՂԱՐԿՎԱԾ ՔԱՐՏԵՐԻ ՔԱՆԱԿԸ	30/06/2023
Ընդհանուր ArCa, MasterCard և Visa թողարկված քարտեր	**131,320**

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ	30/06/2023
Իրավաբանական անձինք	**7,915**
Անհատներ	**125,433**
Ընդհանուր	**133,348**

Արդյունքներ Նորություններ, Պրոդուկտներ

Ներդրումներ կատարելու ժամանակն է

Էվոկաբանկը թողարկել է իր նոր թվային պրոդուկտը՝ EvocaINVEST ներդրումային հավելվածը:

տեսնել ավելին

Նոր EvocaTOUCH հավելվածն արդեն հասանելի է

Էվոկաբանկը ներկայացրեց իր նոր՝ EvocaTOUCH հավելվածը՝ ժամանակակից, նորագույն թվային լուծումներով ու անսահմանափակ հնարավորություններով:

տեսնել ավելին

Արդյունքներ Նորություններ

254 մլն դրամի նվիրաբերություն Երևան համայնքին

Էվոկաբանկը կատարել է նվիրաբերություն Երևան համայնքին՝ մարզադպրոց վերակառուցելու համար:

տեսնել ավելին

Էվոկաբանկը ժամկետից շուտ ավարտել է իր պարտատոմսերի տեղաբաշխումը

Պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը կազմել է 2 մլրդ ՀՀ դրամ, 10 մլն ԱՄՆ դոլար և 7 մլն Եվրո:

տեսնել ավելին

Էլեկտրոնային ստորագրության e-Sign համակարգ Էվոկաբանկում

Evocabank-ն անցում է կատարում թղթայինից էլեկտրոնային տեխնոլոգիայի:

տեսնել ավելին

Ֆինանսական արդյունքներ (ՄԼՆ. ԴՐԱՄ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ



ՊԱՐՏԱՎՈՐՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ



ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ֆինանսական արդյունքներ

Վարկային պորտֆելի կառուցվածք

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



Ֆինանսական արդյունքներ

Վարկային պորտֆելի կառուցվածք

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԸՆՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



Ֆինանսական արդյունքներ

Ֆինանսական գործակիցներ

Կապիտալի շահութաբերություն (ROE)



Ակտիվների շահութաբերություն (ROA)



Զուտ տոկոսային մարժա (NIM)



Վարկային ռիսկի ծախսատարություն (COR)



Ռիսկերի կառավարում

Նորմատիվներ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ (Ն1)



ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ (Ն2.1)



ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ (Ն2.2)



ՍԱՀՄԱՆԱՉԱՓ ԲՈՒՖԵՐ

Վարկային ռիսկի կառավարում

Վարկային ռիսկը Բանկի վարկառուների կողմից իրենց վարկային պայմանագրային պարտավորությունների ժամանակին և ամբողջական չկատարելու ռիսկն է, որը կարող է հանգեցնել Բանկի շահույթի և/կամ կապիտալի նվազմանը:

Վարկային ռիսկի կառավարումը Բանկը իրականացնում է թե՝ անհատական վարկառուների և թե՝ վարկային պորտֆելի մակարդակով:

Վարկային ռիսկի կառավարում

Անհատական վարկառուների վարկային ռիսկի կառավարման հիմքում Բանկը հիմնվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- վարկի նպատակայնության առկայություն,
- վարկառուի գործունեություն բնապահպանական ռիսկի թույլատրելի մակարդակում
- ապահովության միջոցի առկայություն, ապահովության միջոցի տեսակից կախված վարկ/գրավ սահմանաչափերի սահմանում,
- վարկային պատմության առկայություն,
- վարկի մարման աղբյուրների և կայուն եկամտի առկայություն,
- վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանում:

Վարկային ռիսկի կառավարում

Վարկային պորտֆելի ռիսկի կառավարման հիմքում Բանկը հիմնվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- վարկային պորտֆելի կենտրոնացումների սահմանաչափերի սահմանում ըստ տնտեսության ճյուղերի, խոշոր փոխառուների, աշխարհագրական վայրի և այլն,
- վարկային պորտֆելի կառուցվածքի սահմանում ըստ վարկային պրոդուկտների, ռիսկի դասերի և այլն:

Ստեղծված վարկային ռիսկի կառավարման համակարգի արդյունքում Բանկի վարկային պորտֆելում չաշխատող ակտիվների մասնաբաժինը 30. 06. 2023թ-ի դրությամբ կազմում է 2.03%:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկը Բանկի կողմից իր պարտավորությունները ժամանակին և ամբողջական կերպով չկատարելու ռիսկն է, որը կարող է առաջանալ ակնկալվող դրամական հոսքերի չստացման, անակնկալ կորուստների, օրենսդրական փոփոխությունների և այլ պատճառներով:

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանաչափերին հետևելու համար Բանկը օրական կտրվածքով հաշվարկվում է իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվները, որոնց հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկը կիրառում է հետևյալ մեթոդները՝

- իրացվելիության նորմատիվների, սահմանված ցուցանիշների սահմանչափերի վերլուծություն
- իրացվելիության ճեղքվածքի (GAP) վերլուծություն,
- սթրես թեստավորում
- բնակի պարտավորությունների դիֆերսիֆիկացիայի մակարդակի վերլուծություն,
- դրամական հոսքեր փաստացի և կանխատեսվող ծավալների վերլուծություն:

30. 06. 2023թ դրությամբ իրականացված սթրես թեստերը ցույց են տալիս, որ նույնիսկ այն սթրեսային սցենարի դեպքում, երբ տեղի է ունենում ֆիզիկական անձանց ցպահանջ միջոցների (բանկային հաշիվների) 70% և ժամկետային ավանդների չերաշխավորված մասի 50%մարում, ապա Ընդհանուր իրացվելիության նորմատիվի վրա ազդեցությունը կազմում է մոտ 12.6 տոկոսային կետ և նորմատիվը գտնվում է թույլատրելի սահմաններում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը շուկայական գործոնների ազդեցության ներքո Բանկի ներդրումների արժեքը կորցնելու ռիսկն է: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի կառավարումն համար Բանկն կիրառում է հետևյալ մեթոդները՝

- տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների եւ պարտավորությունների միջեւ առկա ժամկետայնության ճեղքվածքի (GAP) վերլուծություն,
- եկամտաբերության կորի փոփոխության վերլուծություն:

Ստեղծված տոկոսադրույքի ռիսկի կառավարման համակարգի արդյունքում 30.06.2023թ. դրությամբ Բանկի տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ճեղքվածքը չի գերազանցում 6.25%-ը, իսկ եկամտաբերության կորի 100 բազիսային կետով տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխության դեպքում առաջացած վնասը չի գերազանցում Բանկի ընդհանուր կապիտալի 1.31%-ը:

Արտարժութային ռիսկի կառավարում

Արտարժութային ռիսկը ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով:

Բանկն իրականացնում է ակտիվների ու պարտավորությունների արժութային ճեղքվածքի կառավարման հավասարակշռված ու ցածր ռիսկային քաղաքականություն: Արտարժութային ռիսկի կառավարման հիմքում Բանկը հիմ նվում է արտարժութային բաց դիրքերի արդյունավետ կառավարման և արտարժութային ռիսկի կառավարման նորմատիվային սահմանաչափերի պահպանման վրա:

30.06.2023թ դրությամբ իրականացված սթրես թեստերը ցույց են տալի, որ արտարժույթի փոխարժեքի 18.16% բացասական փոփոխության հետևանքով առաջացած արտարժութային ճեղքվածքի գծով վնասը չի գերազանցում Բանկի ընդհանուր կապիտալի 2.0%-ը:

Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկը ներքին գործընթացների և համակարգերի ոչ համարժեքության կամ խափանումների, ինչպես նաև մարդկանց և արտաքին գործոնների անբարենպաստ ազդեցության արդյունքում կորուստների առաջացման հավանականությունն է:



Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկի կառավարման հիմքում Բանկը հիմնվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- մասնագիտացված ստորաբաժանումների ստեղծում,
- ներքին գործընթացների մշակված համակարգեիր ներդրում,
- ներքին հսկողական համակարգերի ներդրում,
- տեխնիկական միջոցների արդիականացում,
- պոտենցիալ ռիսկերի բացահայտում նոր պրոդուկտների, նոր բանկային գործառնությունների և նոր համակարգերի ներդրման դեպքում,
- տվյալների բազաների արխիվացում, պահպանում։

Ռազմավարական ռիսկի կառավարում

Ռազմավարական ռիսկի կառավարման հիմնական նպատակն է անհամապատասխան Բիզնես մոդելի որդեգրման արդյունքում առաջացող կամ հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելը:

Ռազմավարական ռիսկի առաջացման հնարավորությունը բացահայտելու և գնահատելու նպատակով Բանկը ներդնում է չափանիշներ, որոնց կարգավիճակի և մեծության փոփոխությունը նշանակում է Բանկի գործունեության որոշակի ուղղության բնույթի փոփոխություն:

Ֆինանսական հաշվետվություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի (մլն. դրամ)

ԶՈՒՏ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ



ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ



ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ



Ֆինանսական հաշվետվություն

👆 ԱՎԵԼԻՆ

Պատասխանատու անձանց հայտարարություն

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. Ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Էվոկաբանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ եւ լիարժեք ձեւով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

2. 2023 թվականի հունիս ամսվա աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առում ներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2023 թվականի հունիսի 30-ի դրությամբ:

Պատասխանատու անձինք

ԿԱՐԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Վարչության նախագահ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Վարչության նախագահի առաջին տեղակալ

ՏԱԹԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վարչության նախագահի տեղակալ

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Վարչության նախագահի տեղակալ

ԼԻԼԻԹ ԳԱԲՈՅԱՆ
Վարչության նախագահի տեղակալ ֆինանսական գծով

ԷՄՄԱ ՋԱՆԻՆՅԱՆ
Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ

ՍՄԲԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ

ՄՀԵՐ ՍԱՀԱԿՅԱՆ
Վարչության անդամ, Ծրագրավորման և գործառնական համակարգերի վարչության պետ

evocaBANK

HELLO@EVOCA.AM | (+374 10) 60 55 55
ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 44/2, 0010